

Մարգարյան Սուրեն Թ.


պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ) sargsyansuren@yandex.ru

EDN: IAGANB

1988 թ. սկսված Ղարաբաղյան շարժումն ընդրկեց կյանքի բոլոր բնագավառները, այդ թվում նաև պատմագիտությունը: Ոլորտի շատ ներկայացուցիչներ, թողնելով իրենց հիմնական թեմաները, սկսեցին փորփրել արխիվներն ու տարաբնույթ փաստաթղթեր հրապարակել և ապացուցել, որ Արցախը պատմական հայկական տարածք է եղել: Տպավորություն էր, թե ԽՍՀՄ վերնախավն այդ ամենից տեղյակ չէր: Սակայն սխալվում էին, քանի որ հատուկ ծառայությունների հրահանգով ամեն ինչ ուսումնասիրված էր և նրանք քաջատեղյակ էին իրերի իսկական վիճակի մասին ու ներողամտորեն ժպտում էին մեր միամտության վրա, քանզի գիտեին, որ թղթերով հողի ու տարածքի տեր չեն դառնում: Պատմությունը կրկնվում է: Հիմա էլ ոգևորված հրապարակում են 1921 թ. Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանի անբաժանելի մաս ճանաչելու մասին վավերագիրը: Իրականում Արցախը Հայաստան է իր ամեն քարով, պատմական հուշարձաններով և ամեն ինչով: Հիմա՝ կորցնելուց հետո, ճիշտ ժամանակն է, որ բոլոր կասկածները փարատվեն և արատավոր կեցվածք ունեցողներին զրկեն շարունակաբար զիջելու իրենց կործանարար կեցվածքից: Հարկավոր է նաև հասկանալ, որ զանազան վավերագրերը լոկ թղթի կտորներ են և իրականում ուժն է ծնել ու ծնում է իրավունքը:

Դարեր շարունակ զիջել ու կծկվել ենք, սակայն իրատես չենք դարձել, քանզի զգացմունքայնությունը միշտ գերակա եղավ սառը դատողության ու հաշվենկատության նկատմամբ: Այդ պատճառով դիվանագիտություն չունեցանք, դարեր շարունակ վարդանամահկոնյանական պաթոսով նետվեցինք անհավասար մարտերի ու պարտությունները հաջորդեցին միմյանց, մեզ թողնելով միայն **բարոյական հաղթանակները**, ասել է թե՛ **պարտությունների խոսքային արդարացումները**: Այսօր էլ ոչինչ չի փոխվել, մնացել է ճիշտ կողմնորոշվելու հրամայականը, քանզի բան էլ չի մնացել զիջելու: Արդ՝ դարեր շարունակ կողմնորոշման չլուծված հարցը գերխնդիր է դարձել նաև այսօր. դեպի Ռուսաստան, թե դեպի Արևմուտք: Ավելին, մեր նորելուկ «սամենագետ» գործիչների համար դա միջոց է դարձել հարձակման թիրախ դարձնել բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն սեփական տեսակետ հայտնել: Հիմնախնդրին քաջածանոթ պատմաբան եմ և չեմ խուսափի սեփական տեսակետ հայտնելու, քանզի վստահ եմ, որ ովքեր իրենց փրկությունն իրենցից դուրս են փնտրում, կործանվում են: Հարկավոր է մեկընդմիշտ հասկանալ, որ յուրաքանչյուր էթնոս ունի իր պետական ու ազգային շահերը, ուստի լավագույն ելքը դրանց ծիրում տեղավորվելն է և ոչ որևէ մեկին դեմ գնալը կամ ընդգծված առավելություն տալը:

Ինձ համար օրինակ այնքան էլ ընդունելի չէ, որ որոշ ղեկավարներ ու քաղաքագետներ անողորմար փորձում են հանրային գիտակցությանը պարտադրել արևմտյան արժեքները: Հնում, երբ Հռոմին չհաջողվեց իրեն ենթարկել հայերին, դիմեց խարդախ միջոցի և կաթոլիկություն



տարածելով սկսեց պառակտել հայ ժողովրդին: Հայաստանում կաթոլիկ քարոզիչներին հաջողվեց համախոհներ հավաքագրել և նրանց կաշառելով դարձնել կաթոլիկության քարոզիչներ: Դրանից Պարսկաստանը և Թուրքիան Օգտվում էին, քանի որ ջլատվում էին Հայ առաքելական եկեղեցու շուրջ համախմբված ժողովրդի ուժերը: Այս օրերին էլ Արևմուտքը ձգտում է Հայաստանում տարածել արևմտյան արժեքներ: Այդ նպատակով նրանք գտան քաղաքացիական և քաղաքական դաստիարակությունից հեռու, անգուսպ ու անվայելուչ շուկայական անողորքությամբ աչքի ընկնող իրենց ազդեցության գործակալներ, որոնք քարոզներով ձգտում են քաղաքացիներին համոզել, թե Հայաստանի առաջընթացը կարելի է ապահովել բացառապես Արևմուտքին ինտեգրվելով: Այդ «առաքյալները» իրենց գործի միակ խոչընդոտը համարում են Ռուսաստանին և ձգտում են Հայաստանը հեռացնել նրանից, Հայաստանում վերացնել ընտանեկան ավանդույթներն ու ազգային արժեքները և ձևավորել արևմտյան արատավոր բարքեր:

Տեղին է հիշել, որ Մարկ Տվենը դեռևս 1906 թ. սեպտեմբերի 7-ին իր ինքնակենսագրականում գրում էր, թե 125 տարի շարունակ ամերիկացիները սովորեցնում են Եվրոպային. «Մեզ ոչ ոք չի հրավիրել, մենք ինքներս ենք մեր կարծիքը նրան աներեսաբար պարտադրում: Մենք անգոսաքս ենք. Իսկ երբ անգոսաքսին ինչ որ բան հարկավոր է, նա գնում և վերցնում է: Մենք՝ անգլիացիներս ու ամերիկացիներս, գող ենք, ավազակներ ու ծովահեններ, ինչով էլ հպարտանում ենք: Անոթ է քաղաքակիրթ հասարակությանը, որ իր շարքերում հանդուրժում է մարդկության այդ խայտառակությանը»: Անցել է 100 տարուց ավելի, իսկ այդ ընթացքում անգլոսաքսերի կողմից Արևմուտքի Հռոմեական կայսրության գործողություններին միանգամայն նման զավթողական քաղաքականությունը գերեթե նույնն է մնացել: Հատկանշական է, որ պատմիչ Տացիտոսը մեջբերելով հռոմեացիների մասին Բրիտանիայի ցեղային առաջնորդներից Կալգակի խոսքերը, նշում էր. «Հափշտակելը, սպանելը, թալանելը, նրանց կեղծավոր լեզվով կոչվում է կառավարել: Իսկ երբ ամեն ինչ վերածվում է անաստի, դա անվանում են խաղաղություն»: Մեր օրերում այդպես եղավ Հարավսլավիայում, Իրաքում, Աֆղանստանում, Սիրիայում, Լիբիայում, Ուկրաինայում: Այսօր էլ Արևմուտքի քաղաքականության մեջ նույն սկզբունքն է գործում՝ ահաբեկել և իրենց բարեկեցությունն ապահովել մյուս ժողովուրդների հաշվին:

Հայաստանի անկախության հռչակումից ի վեր Արևմուտքն աջակցության խոսքեր է շռայլում, սակայն որևէ գործնական քայլ չի անում դրանք իրագործելու համար: Իսկ մեր քարոզիչները, ոգևորվելով այդ դատարկ խոսքերից, շեշտում են, թե Հայաստանի փրկությունը ՆԱՏՕ-ի մեջ մտնելու, Եվրոմիության անդամ դառնալու մեջ է: Մինչդեռ Արևմուտքը երբեք չի խոսում Հայաստանին ՆԱՏՕ-ի և Եվրոմիության անդամ դառնալու հնարավորության մասին: Անցյալում էլ Արևմուտքը հայերին շատ խոստումներ տվեց, բայց դրանք երբեք չիրականացան: 1918-1920 թթ.-երին ևս նրանք Սևրի մեռելաձին դաշնագրի տեսքով խոստումներ շռայլեցին, որպեսզի հայերին հեռու պահեին Ռուսաստանից, իսկ իրականում որևէ իրական օգնություն այդպես էլ չեղավ:

Մինչ այդ էլ չորս անգամ Անգլիայի վարչապետի պաշտոնը զբաղեցրած Ուիլյամ Գլադստոնը սուլթան Աբդուլ Համիդ II-ին «մեծ մարդասպան» էր անվանում, իսկ «Հայաստանին սատարելը՝ ծառայել քաղաքակրթությանը»: Սակայն 1880-1885 թթ.-ին, հայկական վիլայեթներում բարենորոգումների ծրագիրը քննարկելիս, Գլադստոնը պաշտպանեց Թուրքիայի շահերը: 1916 թ. նոյեմբերի 7-ին Ֆրանսիայի վարչապետ Բրիանը հայտարարում էր. «Երբ արդար հատուցման ժամը հնչի, Ֆրանսիան պիտի չմոռանայ հայ ազգի կսկծալի տանջանքները և, համաձայն իր դաշնակիցներուն հետ, ձեռք պիտի առնէ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ անոր ապահովելու համար խաղաղութան և բարգաւաճման կեանք մը» [Կարապետ Իզմիրյան. Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսութիւն), Պէրյուժ, 1964, էջ 185]: Իսկ արդեն 1914 թ. հոկտեմբերի 27-ին, Անգլիայի վարչապետ Ասքվիթն ասում էր, թե Թուրքական տիրապետության չքացումով կվերանա այն խոցը, որն ուտում է երկրագնդի գեղեցկագույն մասերը: Լ. Ջորջն էլ հայտարարում էր. «Թուրքն անեծք ու ժանտախտ է այն վայրերի համար, որտեղ փռում է իր վրանը: Նա չունի շնորհակալության զգացում այն մարդու նկատմամբ, որը բուժել է նրա վիրավոր թայթը և Հայաստանը նորից չպետք է դրվի թուրքերի աղետաբեր տիրապետության տակ»:

1918 թ. մայիսին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնն էլ հայտարարում էր. «Թուրքիան իր դաժանություններով սպացուցեց Եվրոպայում գոյություն ունենալու իր կասկածելի իրավունքը: Հայերի ընդհանուր կոտորածը ստիպում է մեզ Եվրոպայի սահմաններից վերացնել այդ տգեղ բանդան: Հայաստանը պետք է ստանա այն, ինչի համար նա պատմական իրավունք ունի: Նա կրանքի ավելի շատ իրավունք ունի, քան Թուրքիան»:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի դաշնագրի 88-93 հոդվածներով Թուրքիան պետք է ճանաչեր Հայաստանը որպես ազատ ու անկախ պետություն: Սակայն պայմանագիրը ստորագրող երկրներից ոչ մեկը մատը մատին չտվեց, երբ Քեմալը նոր արշավանք ձեռնարկեց Հայաստանի դեմ: Մուստաֆա Քեմալի գովեստին արժանանալով՝ Սևրի պայմանագրից առաջինը հրաժարվեց Ֆրանսիան: Ընդհանրապես Սևրի պայմանագիրը արևմտյան տերությունների միջև հակասություն-

ների սրման պատճառով չծնված մեռավ: Այն ստորագրած տերությունները շտապեցին Քեմալի հանրապետության հետ կարգավորել հարաբերությունները՝ նրա մեջ տեսնելով պատվար հտորհրդային Ռուսաստանի դեմ:

1920 թ. օգոստոսի 10-ին հայ-ադրբեջանական փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով Ռուսաստանի և Հայաստանի միջև ստորագրված համաձայնագրով ռուսական զորամասերը պետք է մտնեին Ղարաբաղի, Չանգեզուրի ու Նախիջևանի գավառները և կանխելին ազգամիջյան ընդհարումները: Անտանտի երկրները շուտով հրաժարվեցին Սևրի պայմանագրից: 1920 թ. դեկտեմբերին Փրանսիայի վարչապետ Լեյգը հայտարարեց, որ Սևրի դաշնագրի միջոցով անհնարին է Թուրքիայի հետ խաղաղություն հաստատել: Իսկ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը, մոռանալով իր խոստումները, Մերձավոր Արևելքում գերագույն կոմիսար նշանակված ադմիրալ Բրիստոլին հրահանգեց հավաստիացնի Քեմալին, թե ԱՄՆ-ն երաշխավորում է Թուրքիայի սահմանների անձեռնմխելիությունը: Լոզանի կոնֆերանսում էլ Անտանտի երկրները վերջնականապես մոռացան հայերին տված խոստումները, թաղեցին հայկական հարցը և պաշտպանեցին Թուրքիայի շահերը:

Բախտորոշ այդ իրադարձություններից անցել է 100 տարի: Այժմ էլ Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ Արևմուտքի քաղաքականության մեջ ոչինչ չի փոխվել՝ խոսքով պաշտպանում են հայերին, իսկ գործով՝ Թուրքիային ու Ադրբեջանին: Լեռնային Ղարաբաղի անկախության երեսուն տարում Արևմուտքի շատ գործիչներ Ղարաբաղի հայությանը պաշտպանելու մասին հայանպաստ խոսքեր են ասել, բայց նրանցից ոչ մեկը ոչ միայն չճանաչեց ԼՂ անկախությունը, այլև համարեց այն Ադրբեջանին պատկանող տարածք: Իսկ 2020 թ. 44-օրյա ադրբեջանաթուրքական ագրեսիայից հետո Արևմուտքի ղեկավարներն ընդամենը հանդես եկան Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին պաշտպանելու ոչինչ չստող հայտարարություններով: Ասել կուզի, որ երբեք պետք չէ մոռանալ Արևմուտքի երեսպաշտ վարքագծի հետևանքները զգույշ ու հաշվենակատ լինել բոլոր, այդ թվում նաև հայ ժողովրդի համար գոյաբանական նշանակություն ունեցող կողմնորոշման հարցում:

Արևմուտքի հայանպաստ ռևերանսներին պետք չէ տուրք տալ, քանի որ Արևմուտքի համար Հայաստանի գոյությունն էական որևէ դերակատարություն չունի: Իսկ Հայաստանի ղեկավարությունը հաշվի չի առնում անցյալի դառը փորձը և Ռուսաստանին վարկաբեկելով՝ անիրատեսորեն շարունակում է միայն Արևմուտքին ապավինվելու քարոզը՝ ականա դառնալով Թուրքիայի շահերի քարոզիչներ: Կարծում ենք, որ սա այնքան էլ ճիշտ չէ: Հարկավոր է հաշվենակատ լինել, ամենից առաջ հենվել սեփական ուժերին, **հանդես բերել բազմաբևեռ մտածելակերպ**, միաժամանակ **կարողանալ տեղ գտնել և՛ Արևմուտքի և՛ Ռուսաստանի քաղաքական շահերի ծիրում** և օգտվել դրանից:

Сдана / Հանձնվել է՝ 29.11.2023

Рецензирована / Գրախոսվել է՝ 04.12.2023

Принята / Ընդունվել է՝ 06.12.2023